



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2013թ. թիվ 10-Ա

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ
ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Լոռու մարզի տարածքում 2013 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ճշգրտել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. հոկտեմբերի 3-ի թիվ 196-Ա որոշմամբ «ՀՀ Լոռու մարզի տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործողությունների պլանի» թիվ 7 հավելվածի «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը»:

3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Համայնքների 2013թ. բյուջեներում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2013թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն.

2) Մինչև ս/թ մարտի 1-ը կազմել համապատասխան միջոցառումների պլան և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար.

3) Մինչև ս/թ մարտի 1-ը Լոռու մարզային փրկարարական վարչություն.

ա. տրամադրել տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

բ. ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝

2013 թվականի ընթացքում պարբերաբար քննարկել «Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետերի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ *A. Քամի* Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. հունվարի 29

ք.Վանաձոր